

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

30.04.2021թ.-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով

թիվ 19-3 որոշում

- Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ 29/04/2021թ.-ի Խորհրդի նիստի թիվ 123-3.2 որոշումը և հաշվի առնելով Բանկի 2020 թվականի ֆինանսական արդյունքները՝ Բանկի 2020թ. գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթից Բանկի բաժնետերերին վճարել 2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ (այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ):
- Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 31/12/2021թ.-ն (երկու հազար քսանմեկ թվականի դեկտեմբերի երեսունմեկը) ներառյալ, Ֆինանսական գծով Բանկի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի հսկողությամբ, դրամական եղանակով, միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ՝ պայմանով, որ դա չի հանգեցնի Բանկի և/կամ վերջինիս բաժնետերերի կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտմանը:
- Շահութաբաժինների վճարումն իրականացնել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ (այն է՝ 22/03/2021թ.) Բանկի մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն: